

Առաջին երկու սիւներու գլխագիրներն ընթացիկ՝ իսկ վերջին սեանը վերէն վար կարգալով կ'ունենանք «Աբբայ Հայր կոչէ Սարգսի» : Սոյն նամակին վերջը կը յաւելու : «Վրդանէս Արքեպիսկոպոս ալեծաղիկ Հօրէ իմմէ Սրբազանէ, շնորհակալ եմ ըստ ամենայնի, զի անդր քան զոր կարծիւրն՝ ողջամբ ընկալաւ եւ սիրով գգուեաց զմեզ : Նմանապէս եւ զՍտեփաննոսէ Աստուածաբան վարդապետ եղբօրէ մերմէ ասեմ :

Այս վրէժնէն Աբեղէ-Կոչի վրայ, զոր Սարգիս յաջորդ նամակներուն մէջ ալ կը յիշէ, հետեւեալ տեղեկութիւնները ժողոված եմ : Ծնած է 1661ին ի Կեսարիա. մականունն է Սեփեմեան (կոնգակ իւր 10 Մարտ 1738. Գիւլ. Անտ.), աշակերտած ի Գաղատիա Զէյթունցի Ստեփանոս վ.ին, որ Սուլէ կը կոչուէր մազն ու մօրուքը բնաւ չկտրելուն համար, եւ որ 1670էն մինչեւ 1694 Գաղատիոյ Առաջնորդ էր, որմէ ետեւ Զէյթուն մեկնած եւ հոն վախճանած 1697ին : Վրթանէս Գաղատիոյ վանքին միաբան ըլլալով՝ Էջմիածնի միաբան եղած էր : Ստեփանոս Զէյթունցւոյ յաջորդին Ժամանակ, որ էր իր ազգականն Կարապետ վ. Զէյթունցի (յետոյ 1726 փետր. 17ին ի Կ.Պօլիս Էջմիածնի Կաթողիկոս օծուած, Տաշեան 341, «Երեւակ» 1860, ձեռնադրութենէն ետեւ՝ Կ. Պօլսէն հպատակութեան Թուղթ մը գրած է Իննովկենտիոս Ժ.Գ. Քահանայապետին փափաղեան Իգն. Արքեպ. Պատմ. Եկեղ. վ.նետ. 1848, էջ 933